ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 20.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 12-ը հունիսի 2014թ.

Նախագահ՝ Ա.Վ. Յուցուլյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ***2014-18 թթ. ուստարվա ուսումնական պլանների քննարկում և հաստատում:***

   /զեկ. Ա. Վ. Յուցուլյան/

2. ***Կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխություններ:***

   զեկ. Ա. Վ. Յուցուլյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Յուցուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Յուցուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Յուցուլյանը: Նա ներկայացրեց 2014-18թթ. ուստարվա ուսումնական պլանները: ՈՒսումնական պլանները կազմվել են «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության գծով, կազմվել է պլան նաև «Քարտեզագրություն և կադաստրային գործ» նոր մասնագիտության համար: Քանի որ «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությամբ ընդունելությունը

կազմակերպվել է առաջին անգամ, զեկուցողը մանրամասնեց ուսումնական պլանները ըստ դասընթացների և ժամաքանակների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Մ. Ա. Զաքարյանը, Գ. Վ. Գուլակյանը և ուրիշներ: Նրանք հավանության արժանացրին ներկայացված ուսումնական պլանները, ընդգծելով նշված մասանգիտությունների առավելությունները և արդիականությունը:

ՈՐՈՇՈՑԻՆ-Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին հաստատելու 2014-18թթ.ուստարվա ուսումնական պլանները:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետում մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտության մասին: Կրթական ծրագիր կազմվել է նաև «Քարտեզագրություն և կադաստրային գործ» նոր մասնագիտության գծով, այն ներառում է մասնագիտության կրթական բարեփոխումների, ուսման որակի բարձրացման ու պահանջների իրականացման գործընթացի մասին: Նա հույս հայտնեց, որ ֆակուլտետում մասնագիտությունների փոփոխությունը առաջընթաց կապահովի ուսանողների մասնագիտական կարողությունների և կրթական մակարդակի բարձրացման գործում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ա. Զաքարյանը, Գ. Վ. Գուլակյանը, Է. Կ. Օսիպովան: Նրանք հավանություն տվեցին ներկայացված նյութին և որոշեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել 2014-15թթ. ուստարվա կրթական ծրագրերը:

ՆԱԽԱԳԱՀ **Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**